ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

« ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03» ծածկագրով «Շինարարական ապրանքների» ձեռքբերման «Գնանշման հարցման» ընթացակարգի «Հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի»

ք. Կապան

10 հոկտեմբեր 2018թ.

ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ալավերդյան – « Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ /ԳԱՊ/

Անդամներ

Ն. Ավագյան- Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-դեղագործ/ԲԱ/

Մ. Ավագյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի վիճակագիր /ԲԱ/

Ա. Պետրոսյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի գործավար /ԳԱ/

Ք. Մելքումյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի հերթապահ բուժքույր /ԳԱ/

Քարտուղար-գնումների համակարգող

Ռ. Մկրտումյան - Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ի տնտեսագետ

1. ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03 ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման համապատասխանության մասին

(Անահիտ Ալավերդյան)

1.1. ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում որակավորման չափանիշներին համապատասխանության վերաբերյալ մասնակիցների համապատասխանաբար ուղարկվել է ծանուցում՝ 03.10.2018թ.-ին համաձայն հրավերի պահանջների՝ առաջարկվում է. ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:
Սակայն ԱՐՄ-ՄԱՐ ՍՊԸ-ն ի պատասխան ծանուցմանը .

Հայտնել է, որ 27.09.2018թ-ին Սյունիք մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր ՓԲԸ-ի կողմից ներկայացրած ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03 ծածկագրով մրցույթին մեր հայտը լրացվել է ոչ ճիշտ: Հայտում ներկայացրել ենք ապրանքի մեկ միավորի գինը, այդ իսկ պատճառով չենք կարող տալ որակավորման չափանիշներ և մատակարարել նշված ապրանքները:
Այդ իսկ պատճառով, ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ 43-րդ կետի 4-րդ ենթակետով պայմանավորված՝ սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, դրանով պայմանավորված 1,3,4,6-14,18,23,24,27-30, 32,33,38-42,44,46-47-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչել Լիաքար ՍՊԸ-ին:

1.2. Հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա նախնական տվյալներով.

-համապատասխանում են «Լիաքար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնման հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համապատասխան եզրակացության մասին

(Անահիտ Ալավերդյան)

2.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3.ՀՀ ՍՄ-ՆԴ-ԳՀԱՊՁԲ-18/03 ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նախնական արդյունքների մասին
(Անահիտ Ալավերդյան)

3.1. Գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկների հիման վրա, որոշում է կայացվել, որ.

✓ ա) I տեղ գրաղեցնող (ընտրված մասնակից) է ճանաչվել. 1,3,4,6-14,18,23,24,27-30, 32,33,38-42,44,46-47-րդ չափաբաժիններով էլ «Լիաքար» ՍՊԸ-ն:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4. Անգործության ժամկետ սահմանելու մասին
(Անահիտ Ալավերդյան)

4.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-րդ բաժնի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 11.10.- 15.10. ներառյալ:
Կազմակերպության տնօրենին ծանուցվել է պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու անհրաժեշտության մասին:
Մասնակցի կողմից պայմանագրի կատարման ապահովումը է պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝		Ա. Ալավերդյան
հանձնաժողովի անդամներ՝		Ն. Ավագյան
		Մ. Ավագյան
		Ա. Պետրոսյան
		Ք. Մելքումյան
Գնումները համակարգող՝		Ռ.Մկրտումյան